

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի.  
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և առիթ օրերէն)

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են  
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԻՆՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ե շ ի ս ա բ է թ Զ ա ք ա ր ե ա ն Գ է ո Ր Գ Ե ա ն ց ի ր ո Ր Գ չ Զ ե ո, և ի ա չ ա տ ու ը Ր  
Բ ա ղ Գ ա ս ար ե ա ն Գ է ո Ր Գ Ե ա ն ց յ ա յ ա ն ու մ են, որ ամսիս 14-ին, չորեքշաբթի  
օր, Մոզնու եկեղեցում, պատարագից յետոյ, լինելու է Հոգեհոգեւոր

Ս Տ Ե Փ Ա Ն Բ Ա Ղ Գ Ա Ս Ա Ր Ե Ա Ն Գ Ե Ո Ր Գ Ե Ա Ն Յ Ի

յիշատակին (այն Հոգեհոգեւոր փոխարէն, որ նշանակված էր ամսիս 11-ին, բայց  
յետաձգվեց): Պատարագի սկիզբն է առաւօտեան 10 ժամին: 1—1

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկրագործութեան միջնորդի նոր ծրագիրը.  
— ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Մատենագրութիւն.  
Նամակ Գանձակից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ.  
Նամակ Թիֆլիսից. Նամակ Եգիպտոսից. Նամակ  
Պարսկաստանից. Հեռագրեր. — ԲՈՎԱՆ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.  
Ազգի պահպանը:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ  
ՄԻՋԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ

Երկու տարի սրանից առաջ, երբ Ռուսաստանում նոր հաստատվեց երկրագործութեան միջնորդութիւնը, ամենքը հարց էին տալիս, թէ ինչպէս պէտք է այդ միջնորդութիւնը իրագործի իր ծրագիրները պետութեան գանձարան մասերում: Այդ հարցը տուեց իրան և ինքը միջնորդութիւնը: Զգալով խնդրի կարեւորութիւնը, միջնորդութիւնը կազմակերպեց յատուկ յանձնաժողով այդ նպատակով, և զիմեջ նա հանգստեան տեղի և այլ հաստատութիւններին խնդրելով նրանց կարծիքները այդ մասին: Գանձաժողովը երկար և մանրամասն քննութիւնից յետոյ այժմ վերջացրել է իր յանձնարարութիւնը և ընդհանուր ձևով մշակել է ապագայ կազմակերպութեան ծրագիրը:

Այդ ծրագրով Ռուսաստանը բաժանվում է մի քանի մեծ շրջանների, որոնցից իւրաքանչիւրի մէջ մտնում են մի քանի նահանգներ: Այդ շրջանները նման են մեր-

ձառնարակէս այն շրջաններին, որ արդէն գոյութիւն ունեն ուսումնական վարչութեան համար: Ինչպէս կայ կովկասեան ուսումնարանական շրջան, այնպէս էլ կը լինի, օրինակ, կովկասեան զիւղատնտեսական շրջան: Իւրաքանչիւր շրջանի յարմարաւոր մի քաղաքում կենտրոնացած կը լինեն բոլոր այն գործերը, որոնք վերաբերում են շրջանի մէջ մտնող նահանգներին: Եւ այդպիսով շատ խնդիրներ կը քննվեն և կը լուծվեն այդ կենտրոնում, առանց անցնելու Պետերբուրգ: Ի հարկէ, ամեն մի նահանգ կունենայ իր յատուկ վարչութիւնը երկրագործական կարիքների և խնդիրների քննութեան համար, սակայն նա կապված կը լինի շրջանի վարչութեան հետ և կը գործի այն ծրագիրներով, որոնք հաստատվելու գտած կը լինեն շրջանի կենտրոնական մարմինից:

Որքան մեզ յայտնի է, այդ կազմակերպութիւնը ընդհանուր առմամբ նման է այն կազմակերպութեան, որ ծրագրել էր և կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը երկու տարի սրանից առաջ, երբ կարգադրեց այդ խնդրի մասին յատուկ զեկուցում: Պետերբուրգի լրագրիչները դեռ չեն տուել մանրամասն տեղեկութիւն ամբողջ ծրագրի բովանդակութեան մասին և միայն հարցադրում են զլսաւոր գծերը: Լրագրիչների ասելով, հիւսիսային կովկասը և Անդրկովկասը պէտք է կազմեն մի շրջան:

Մեր կարծում ենք սակայն, որ աւելի նպատակաւոր և արդար կը լինէր Անդրկովկասը առանձին շրջան շինել, որովհետեւ թէև

սին ծաղուտ անգամ չը հանեց, որովհետեւ դեռ երկտարարութիւնից դուրս, որ կինը անհաւատարիմ էակ է: Իսկ լապտերի դէմ այլ ևս ծուռ միտք չարաւ. լուցի, բայց աւելի ևս ասեց նրա լոյսը: Եւ ինչպէս չառէ: Այդ լոյսը չէ որ թերաւ պարզի, հարեանի մեծ պատուհանի հետ ամբողջացնում է այն դրութիւնը, որ հարկադրում է նրան օր ու գիշեր բերքով ջրի պէս, որպէս զի տուել մի ժամ անգամ անտէր չը մնայ, առանց պահպանելի:

Պահպանել... Նա շատ լաւ հասկանում էր, որ իր գործը, իր կոչումը այդ է միայն: Եւ զարմանալի էր այն սէրը, որով նա նուիրված էր այն դժուար պայմանին:

Նրա արտաքինը բացառում էր մի միւր և աչքալից պահպանելի բոլոր յատկութիւնները: Մահտեսին ունի մի զոյգ չիճած, անկենդան աչքեր. դրանց սպիտակուցը դեղնած է, ինչպէս ծխի մէջ մնացած սպիտակ չոր, իսկ սեռից, բերի մէջ չէ մնացել և ոչ մի հատ ձողապղծ, որ ազդէր մարդու վրա: Տեսնողը ընդհանրապէս, կարծում է թէ այդ աչքերը չեն տեսնում, ապակեայ փղեղաներ են, որոնք անպարտակ չուռ են դաւի կնձուռն, զեղին, համարաւ միայն երկու ջուլտ թերթներով ունեցող կոպերի մէջ, որոնց վրա իջնում են թաւ և թանի պէս սպիտակ յոնքերը և սպիտակ, միմանց հետ խառնված, ցրիւ ընկած հատ մազերի մի լայն շերտով պատում են վերից այդ չիճած աչքերը, տալով նրանց մի ծանր, նոյն իսկ վախեցնող կերպարանք: Մենակ այդ յոնքերն են վկայում առատ բուսականութեան մասին, իսկ նրա սպի-

Անդրկովկասի մէջ մտնող նահանգների թիւը մեծ է, սակայն ամբողջ երկրի տեղագրական դիրքը և զիւղատնտեսական պայմանները այնքան բազմազան են և երկրագործութեան ձիւղերը այնքան բազմաթիւ, որ մի շրջան հասցնել կարողանայ լուրջ կերպով նրանցով զբաղվել և օրինաւոր կերպով ղեկավարել ամբողջ գործը:

Ըստ երեւոյթին այս անգամ մօտ է երկրագործութեան միջնորդութեան գործադիր մարմինների իրականացումը: Մեզ մնում է ցանկանալ, որ այդ հիմնարկութիւնների ձեռքում լինեն բաւականաչափ ներքինական միջոցներ՝ աջող իրագործելու ծրագիրները, որոնք կը մշակվեն նահանգական և շրջանային վարչութիւնների մէջ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օ Ր Է Յ Օ Ր

VII

Բնորոշ է Կ. Պօլսի այսօրվայ թղթակցութեան մի կէտը. — Հմայեակ եպիսկոպոս Գիւղաքեան, որ երբեք պատրիարքական փոխանորդ էր, և երբեք զլսից չէ հանում պատրիարք լինելու ցնորքը, ազգասիր բար ար վրդովված է, որ խղիւղեանը սովեայնների նպատակ բաժանում է միսիոնարների միջոցով, չորովհետեւ ատու զօրացուցած կըլլա՞ր բողոքականութեան դիրքը Հայաստանի մէջ:

Խեղճ միսիոնարներ. — Կարող էիք մի քանի անգամ երևակայել, որ այս ընդհանուր աղետի ժամանակ, երբ իրենք չաղար ու մի վտանգների ենթարկվում, հաշտակալ և ճշնված, աչքառում էք սրբել մի քրիստոնեայ ժողովրդի արտառուքը, աչքառում էք մի կտոր հաց տալ քաղցածին, մի քանի կաթիլ ջուր՝ ծարաւին, կը գտնվեն մարդիկ, այն էլ աւետարանի սպասաւորն և, որ եղբայրական սրտացաւութեամբ դիմակաւորված, յանուն եկեղեցու շահերի՝ կը բողոքեն այդ մարդասիրութեան, այդ քրիստոնեական աջակցութեան համար...

Թեմերից փախել, լայն տալ ժողովրդից, նըստակ բեղելը փոքր են, նօսր ու կարճ, այնպէս որ չեն ուղղում և բողոքովն չեն ծածկում վերին շրթունքը: Նշանաւոր է, մանաւանդ, Մահտեսու թիւր, գաւառական խուլ անկիւնում դա մի եղակի բան է. երեւի վրա մի մեծ տեղ է բռնում այդ հատ, ուսածի պէս կըլոր ու կապտակաւոր կարմիր գոյն կըլոր միւր, որի ծայրին արմատ են հաստակուն մի քանի հատ սպիտակ մազեր: Այդ բոլորի վրա աւելացրէք և այն, որ նա երկար հասակ ունի, մի երկար փափախի աէր է, ոտներին հազցրած է անմահ չմուշկներ, որոնք որոտալով քսվում են փողոցի քարերին, երբ նա իր սովորական դանդաղ քայլուածքն է սկսում, երկու տաներին օգնութիւն տալով սրածայր մեծ գաւազանը, — և դուք կիմանաք թէ ինչ է մեր լաւ ծանօթ Մահտեսու Մնացականը:

Նա ապրում է անգործ: Դեռ երկտարար էր, երբ վառ սրտով ուսում գնաց Երուսաղէմ: Տարիների մի երկար շարք է անցել այդ ժամանակից: Բայց նա խնամքով պահում է Երուսաղէմի պարզեցեանը — մի մեծ և սև աւերակաւոր, որ միշտ կախ է արած պատի ճակատին, և օրհնած պատանը խնկի և մոմի հետ, զարդարված դանազան տեսակ կնիքներով: Դա Մահտեսու ուղեկիցն ու ուղեցոյցն էր յաւիտենականութեան մէջ, ուստի հասկանալի է թէ ինչ զգուշութեամբ, ինչպիսի սրտակաւ անքով պահվում է նա անուղիկ մէջ: Աչքի լոյսը այնքան թանկագին է Մահտեսու համար, որքան այդ վերջին հանդերձը, որ մի օր սկիտի առաջնորդէ նրան դէպի հուր ձեղքը:

տեղ Բօսֆորի գեղեցիկ ափերի վրա և վայելել նոյն ժողովրդի փողերը, և վերջն էլ սովի, կոտորածի, հրդեհի, ընդհանուր մի աղետի ժամանակ յանդիմարար նկատել թէ փողերը չը պէտք է բաժանել միսիոնարների ձեռքով, այլ հայ եկեղեցականների, լաւ խմանալով հանդերձ, որ այդ եկեղեցականները Պօլսից ուր չեն ուղևորվում գնալ գնել, — այդպէս կարող է անել հայ եպիսկոպոսը միայն, որի իդէալը եկեղեցու չորս սլառներն են, առանց ժողովրդի, առանց կենդանի մարդկանց...

Մտանում են Գիւղաքեան եպիսկոպոսը և իր համախոհները, որոնք մի տարուց աւելի է, որ ոչ մի ան միտ միջոց չեն խնայում պատրիարքի դէմ պայքէս կամ անպէս խտրիզաներ անելու, որ այն միջոցին, երբ իրանք Կ. Պօլսում նստած, վայելում են իրանց դիզած հազարաւոր ոսկիների տոկոսները, այդ նոյն միջոցին միսիոնարները նախ հրաւէրներ են կարդում, փողեր հաւաքելու համար, և երկրորդ՝ ամեն տեսակ վտանգի ենթակայ՝ մտնում են յետին գիւղերը և խրճիթները՝ սփռելու սովաւանջ քրիստոնեաներին, օգնելու նրանց ներկայ աղետի ժամանակ...

Թիւրքաց հայերը այժմ կրօնական պրօպագանդան զարկ տալով չեն հետաքրքրվում. — քաղցածին հաց է հարկաւոր, տանջվածին՝ օգնութիւն: Թիւրքահային այս բողոք չէ հետաքրքրում այն հարցը, թէ ինչ եկեղեցուն է պատկանում որ և է միսիոնար, կամ որ և է բարեգործ. — նա առնում է հացը նրա ձեռքից, ով մեկնում է, նա լսում է սփոթիչ խօսքեր նրա բերանից, ով նրա կողքին է կանգնած, ակամատես նրա ցաւերին:

Չարմանալի են, ճշմարիտ, Կ. Պօլսի հայ եպիսկոպոսները՝ — այդ Գիւղաքեանները, Մահտեսուները, Մուրադեանները, Բարթոլոմէոսները, իրանք ոչինչ չեն չինում, ոտները դուրս չեն դնում Կ. Պօլսից, առաւօտից մինչև երեկոյ զգալով են ոսկիների զեղեղով, որ նոյն իսկ մեռնելուց յետոյ պէտք է մնան ոչ թէ այն ժողովրդին, որից ստացել են, այլ պէտք է կտակեն իրանց ազգականներին և փոքրաւորն ե-

Մահտեսու տունը միշտ լուռ է, դատարկ: Այդտեղ ապրում են միայն երկու ամուսինները — ինքը, Մահտեսին և նրա շնորհակցը: Երկուսին պահում է մի հատ որդին, որ օտար քաղաքում լաւ պաշտօն ունի: Եւ դո՛ւ է Մահտեսին իր բախտից: Երկու պակասութիւն միայն մոտաւորեցութիւն են պատճառում, մէկը տան շրջապարսպի կիսատ տեղն է, միւսը այն, որ այդքան տարի նա չէ կարողանում իր կնոջը խնդրի բերել: Նա դարձեալ չուայ է, 20 կոպէկի միսը երկու օրից աւելի չէ բաւականանում:

— Ե՛հ, ասում են որդի ունի, օրհնում են նրան, գովում են թէ խելօք աղայ է, աշխատաւոր է, մարդկանց մէջ մի հատ ընտրածն է: Բայց ինձ ինչ օգուտ... Աստուած տայ այդպէս լինի, Աստուած իմ կեանքից կտրէ, նրա կեանքի վրա աւելցնէ... Բայց ինչ անեմ, միանգամայն այնքան փող չէ ուղարկում, որ մեղքս քանակեմ, այն կիսատ պատառը չինել տամ: Շատ եմ չարչարվել կեանքիս մէջ, շատ եմ տանջվել... Այժմ փառք Աստուծու... Բայց իմ հանգստութիւնը այն օրը կը լինի, երբ բաց աչքով կը տեսնեմ այդ պակասութիւնը վերացած: Ո՛ր է... Թող մի անգամ գտնէ դայ, միմեանց արժանի լինեմք... և ես կիմանամ:

— Եւ մի անգամ եկաւ որդին Այն էլ ինչպէս եկաւ...

Գաւառական խուլ անկիւնը դարձեալ ոտքի կանգնեց: Հետաքրքրութիւնը անառելի էր. Մի. բայց, Մահտեսու-Մնացականի որդին, պակասել էր և իր կնոջ հետ էր հայրենիք եկել:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա Զ Գ Ի Պ Ա Հ Ա Պ Ա Ն Ը

(Գաւառական հերոսներ)

Հանգիստ քնեց Մահտեսին: Բայց միւր օրը նրան կանչեցին ոստիկանատուն: Կոտորաբող ծնկներով, հարիւր անգամ ինքն իրան անիծելով՝ գնաց Մահտեսին ճանապարհը երկար էր, նա մտածում էր թէ ինչ պիտի պատասխանէ, բայց ոչինչ չէր կարողանում գտնել իրան արդարացեալ համար: Իսկ երբ կանգնեց ոստիկանական պաշտօնային սաղմ, մոռացաւ իր սպիտակ մաշկը, ասաց թէ բոլորովին չը գիտէ թէ ով է կոտորել լապտերը: Նրան հաւատացին, բայց խիտ հրաման տուին զոյգ լինել, լաւ պահպանել լապտերը, եթէ նա միւս անգամ էլ կոտորի, պատասխանատուն սկիտի լինի ինքը, Մահտեսի-Մնացականը: Նա դուրս տուեց և դուրս գնաց, փառք տալով Աստուծուն, որ աղաւթեց փորձանքից: Բայց երբ հասաւ իր տանը, աչքի կոչելով տեսաւ ջարդված լապտերը և նրա տակ ընկած քարը, յիշեց իր մեղքը, իմացաւ որ սուտ է ասել և ամբողջ օրը մտածում էր այդ մեղքի մասին: Երեկոյան դուրս գնաց, վերջից քարը, հեռացրեց և նրա վրա ուխտ արաւ իր մեղքը քանելու համար: Զատից մինչև Համբարձում պատ պահել: Նրա շնորհակցը, որ հարկադրված էր նոյնպէս պատ պահել, չը կարողացաւ իմանալ թէ այդ ինչ ուխտ է: Մահտես-











